№ 210 ԵՐԵՔՇԱԲԹԻ 24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ 24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 210

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ

ասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 3 ՌՈՒԲ.
Սեպտ. 1-ից միինչև հոկտ. 1-ը—85 կ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակաղրոշմ, հին հասցէն եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՎՈՒԹԻՒՆ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ՝ ~20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалъковская, 130, Վիլնայում՝ Большая 38, Ղարիգում՝ Площадь Биржи 8

1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ձրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԵ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԵՐԴՈՒԵԱԼ-ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ
Գ. Խ. ԽՕՋԱՄԻՐԵԱՆԸ
ՏԵՂԱՓՈԽՎԵՑ
ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐ. № 18.
առ. (օ. մ.) 789. 6—4

ԲԺՇԿԱՊԵՏ
ՄԻՐՔ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ
(Մասնագէտ մեզասեռայի՝ սիֆիլիսի և կաւոր հիւանդութիւնների)
վերադառնալով արտասահմանից վերանորոգեց հիւանդների ընդունելութիւնը ցեր. ժամը 1—4-ը և երեկ. ժամը 7—9-ը, Միխայլովսկի պր., 38. տելէֆօն 6—63.
(ե. հ. կ.) առ. 753. 10—7

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ
ПОСТАВЩ. ДВОРА Е.И.В. ВЕЛ. КН. НИКОЛАЯ МИХАИЛОВИЧА
ЗАЛЕ ОТД. ПРОМЫШЛ. ФАБРИЧ. ЗНАКЪ
Անբարեխիղճ մրցութիւնը առաջ է բերել մանր արդիւնաբերողների կողմից՝ հասարակութեան մէջ տարածված և նրանից սիրված ապրանքների էտիկէտների կեղծումն։ Միենոյնը շարունակաբար և քանիցս անգամ պատահել է մեր ֆաբրիկայի պապիրոսների հետ, ևս առաւել այնպիսի տարածված պապիրոսների, ինչպիսիք են
„ՍԻՄՊԱՏԻԱ“ ԵՒ „ԴՐՈՒԺԲԱ“
Դրա համար և, մեր էտիկէտների անընդհատ կեղծումը ի նկատի ունենալով, մանաւանդ որ մեր գնողները շարունակ թիւրիմացութեան մէջ են լինում, խնդրում ենք պ. պ. ծխողներին պապիրոս դնելու ժամանակ ուշադրութիւն դարձնել ֆաբրիկային մարքայի և ապդանունի վրա—
Ա. Տ. Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴԻՔ
Ինչ վերաբերում է կեղծիք կատարողներին, այդպիսիները մեր կողմից կենթարկվեն օրինական պատասխանատուութեան։
առ. 814. 0—1

ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿ.
Երեքշաբթի, սեպտեմբերի 24-ին
ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ
տեղի կունենայ Վիէննայի համալսարանի յայտնի պրոֆեսոր
ԴՐ. Յ. ՍՏՐԺԻԳՈՎՍԿԻԻ
Դասախօսութիւնը ԳԵՐՄԱՆԵՐԻՆ լեզուով
ՀԱՅՈՑ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԸ
եւ նրա նշանակութիւնը Արեւմուտքի եւ Պարսկաստանի համար։
Դասախօսութիւնը կը լուսաբանվի բազմաթիւ մոգական պատկերներով և տեղ-տեղ կը թարգմանվի հայերէն։
Սկիզբն է երեկ. 8 ժամին։
Տոմսակները՝ 2 ր. 50 կ. մինչև 50 կ. գալէրէյան 30 կ.։ Տոմսակները կարելի է ստանալ Սուքանաճեանի երաժշտական խանութում, իսկ դասախօսութեան օրը Ժողովարանում։
(և.) առ. 813. 2—2

412 ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
ՄԵԾ ՅՕԲԵԼԵԱՆ 1912
Տառերի գիւտի 1500-ամեակի առիթով Ս. ՍԱՀԱԿԻ, Ս. ՄԵՍՐՈՊԻ մեծադիր, փոտո-գրաւիւր պատկերների զոյգը 3 ր., Ս. ԷՋՄԻԱԾԻՆ և ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ պատկերների հետ 5 ռուբլի։
Կուղարկվեն յատուկ խողովակներում։
ԴԻՄԵԼ՝ Тифлисъ, БЮРО-ПЕЧАТИ
Головинскій пр. 41.
(օ. մ.) առ. 31 5—3

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ա. ԿԷՈՆՋԵԱՆ
Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացում, (առանց ցաւի)։
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ՝
Ամեն օր (Առաւօտեան ժ. 9—2-ը
(Երեկոյեան ժ. 4—7-ը
Անկիւն Արաս-Արագածայա հրապարակի և Լերմոնտովսկայա փողոցի, № 1.
(և.հ.կ.) առ. 769. 74—6

ԲԺԻՇԿ
Ե. ՔԵՐԵՍՏԷՋԵԱՆ
ՆԵՐՔԻՆ և ԶՂԱՑԻՆ հիւանդութիւններ։
(Առանձին կրծքի, թոքախտի և արեան պակասութեան)
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Ամեն օր (Առաւօտեան ժ. 12—2-ը
(Երեկոյեան ժ. 5—7-ը
Դրաֆեկայա, 3 (Լօրիս-Մելիքովսկայա փողոցի կողմից)։
(և.հ.կ.) առ. 774. 100—5

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

ՍԵՐԲ-ԱԼԲԱՆԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԸ

(Պետ. Հեռագ. Գործ.)
21 և 22 սեպտեմբերի

Բէլգրադ.—Պրիզրէնի մօտ կռիւը շարունակվում է։ Սերբերը ստացել են բաւական օգնութիւն։

Բէլգրադ.—Դիբրում, Ստրուգում և Օխրիդայում առնառուները վանվեցին սերբական երկրից։

Երէկ ամբողջ օրը կռիւ էր տեղի ունենում Պրիզրէնի մօտ Գուրիդերվենտ դիրքում։ Չը նայած առնառուների յուսահատական դիմադրութեան, սերբերը դիրքը գրաւեցին։

Պրիզրէնի ամբողջ շրջանում տիրում է լիակատար կարգ ու կանոն։

Բոլոր նուաճված երկիրներում յայտարարված է զինուորական դրութիւն։

Պրիզրէնից ստացված լրացուցիչ տեղեկութիւնները ճշդում են, որ ալբանները յետ են մղված։ Սերբերը հետապնդում են նրանց։

«Մ. ու Ա.» կուսակցութեան լրագիրները շարունակում են կատաղի արշաւանք ոչ միայն Ցունաստանի, այլ և Կոնստանդին թագաւորի դէմ։

Թիւրքական նաւատորմի ռազմանաւերը, որոնք մի քանի օր առաջ եկած էին Կ. Պոլիս, նորից վերադարձան Դարդանէլ, վերցնելով քարածուխի ու ռազմամթերքի պաշար։

Սոֆիա. — Մօտ հարիւր հիւանդ թիւրք գերիներ ուղարկվեցին Ադրիանուպոլիս։

Սոֆիա.—Գերի բուլգարներին ընդունելու համար Ցունաստան մեկնեց բուլգարական մի մասնաժողով։ Սոֆիա կը գայ յունական մասնաժողովը։

Բէլգրադ.—Սերբ-յունական սահմանակարգիչ մասնաժողովը, աւարտելով իր աշխատանքները Գէվգէլիում, անցել է Բիտօլի սահմանները կարգաւորման աշխատանքները շարունակելու համար։

Վիէննա.—Պաշիչը այցելեց Բերլինոլդին մի ժամով, յետոյ՝ մինիստրնախագահին և միւս մինիստրներին։

Պաշիչը գործակալութեանս թղթակցին ասաց, որ կանգ առաւ Վիէննայում, որպէսզի հաւաստիացնէ թէ Սերբիայի յարաբերութիւնները լօյալ են հարեան մեծ պետութեան վերաբերմամբ, և որպէսզի վկայէ՝ թէ Սերբիան ուրախ է առևտրական բանակցութիւններ սկսելու, որպիսի հարցում նա ընդառաջելու է Աւստրիայի շահերին։ Սերբիան մտադիր է մի քանի ռազմակէտեր ունենալ ալբանական սահմանագլխում, առանց սակայն սերբական երկիրը ընդարձակելու դիտաւորութեան։

Բէլգրադ.—Երէկ վերադարձաւ Պաշիչը Վիէննայից։

Վիէննա.—Պաշիչի այցելութեան առիթով «Ֆրէմդենբլատը» ասում է. «Պաշիչը կարող էր անձամբ համոզվել, որ Աւստրօ-Հունգարիան ոչ մի կանխամտածված դիտաւորութիւն չունի Սերբիայի վերաբերութեամբ. համաձայնութիւն կապելու ցանկութեամբ տոգորված է նաև աւստրիական կառավարութիւնը»։

Ցէտինիէ.—Հրատարակվեց հրովարտակ մասնակի զօրահաւաք կատարելու մասին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Մեզ հաղորդում են, որ Վիէննայի հայկ. կոմիտէի հրաւէրով՝ ազգ. պատգամաւորութեան նախագահ Պօղոս Նուբար-փաշան շուտով մեկնելու է Վիէննա։

Բաւում Պետական Դումայի անդամ Մ. Պապաջանեանը այս օրերս, ինչպէս հաղորդում է «Баку»-ն, Հայոց Մարդասիրական Ընկերութեան շինութեան մէջ զեկուցում է արել հայկական հարցի մասին։ Պետական Դումայի նստաշրջանը աւարտվելուց յետոյ, Պապաջանեան մեկնել էր Կ. Պոլիս, Պարիզ և Բերլին և այնտեղ երկար խօսակցութիւններ ունեցել հասարակական և քաղաքական գործիչների հետ բոլոր այն հարցերի վերաբերմամբ, որոնցով այժմ շատ է հետաքրքրվում հայ հասարակութիւնը։ Պապաջանեանը հակիրճ նկարագրել է հայկական հարցի արդի վիճակը։ Մանրամասն կանգ առնելով գերմանական դիպլոմատիայի դէպի հայկական հարցը ունեցած բացասական վերաբերմունքի վրա, Պապաջանեանը յայտնել է, որ, իր կարծիքով, մօտիկ ապագայում հայկական հարցի մասին կարելի է խօսել աւելի որոշակի և հաւատով, ի նկատի ունենալով ռուս-գերմանական բանակցութիւնների աջող ընթացքը։

ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐՈՒ ԵՒ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐՈՒ ԽՆԴԻՐՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Երկաթուղիներու շինութեան խնդիրը նոր երևոյթ մը տուած կը թուի հայաբնակ գաւառաց բարենորոգման հարցին։ Գերմանիա, Ֆրանսա, Անգլիա և Իտալիա վերջերս նը-պաստաւորուեցան զանազան մենաշնորհներով, իսկ Ռուսիա անման մնաց։ Բայց Ռուսիա վեց կուսակալութեանց մէջ երկաթուղի շինութեան իրաւունք մը ունէր Համիդի օրէն։ Երբ լսուեցաւ, որ Իտալիա Աղալիայէն մինչև Կոնիա և Բուրդուր երկաթուղի մը շինելու իրաւունք ստանալով Փոքր Ասիոյ մէջ տնտեսական կռուան մը ձեռք բերեր է, կերևի թէ Ռուսիա ժամն եկած կը սեպէ միջամտելու ի նպաստ իր շահերուն։

Հիմա, կրսուի թէ, Ռուսիա կը պահանջէ, որ իրեն արտօնութիւն տրուի՝ Կովկասի երկաթուղին, որ Սօղանլու լերանց ստորոտն եկած է, դէպի Էրզրում երկնցնելու և հաղորդակցութեան մէջ դնելու Տրապիզոնէն դէպի Վանայ ծովը երկնալիք մայր-գծի մը հետ։ Այս կերպով թէ Կովկասի և թէ Արևելեան Փոքր Ասիոյ տնտեսական շահերը լիովին ապահովուած պիտի ըլլան։

Միանգամայն, Ռուսիա հոգածու կերևի անդորրութեան պահպանման այն երկրին մէջ, ուր պիտի շինուին այս գիծերը, ուր պիտի ծախսուին ռուսական դրամագլուխներ։

Ռուսիա գլխաւորապէս կը թելադրէ վեցեակ նահանգաց մէջ ոստիկան-զինուորութեան վերակազմութիւնը, եւրոպացի պաշտօնեաներու հսկողութեան տակ։ Եւ որովհետև տմենէն մօտիկ եւրոպեան պետութիւնն է Ռուսիա, ինք կը յօժարի ղրկել պէտք եղած սպաները, գնդապետի մը հրամանին տակ, որ ըլլայ ոստիկան-զինուորութեան ընդհ. վերակազմիչը։ Այս նպատակաւ հարկ է, կըսէ, տեղային եկամուտներու մէկ մասը վերապահել հանր. պարտքի վարչութեան ներքև կամ ուրիշ կերպով հակակշիռով մը։

Որպէս զի պետութեանց միջև որոշ գաղափարներու ընդհարում տեղի չունենայ, Ռուսիա նախ և առաջ Գերմանիոյ հետ համաձայնիլ կը ճգնի, քաղաքական հիման վրայ, յետոյ Ֆրանսայի հետ համաձայնիլ պէտք պիտի ըլլայ, հայաբնակ գաւառաց մէջ գործածելի ռուսական և ֆրանսական դրամագլուխներու քանակն ու համեմատութիւնն որոշելու համար, և կը յուսացուի որ Անգլիոյ կողմէ ոեէ ընդդիմութիւն պիտի չըլլայ, բաւական է որ Գերմանիա Միջերկրականի մէջ նաւային կայան մը շինելու խնդիր չյուզէ։

(«Բիւզանդիոն»)

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆ

—o—

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Էջմիածնում շուտով տեղի է ունենալու հայ գրերի գիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան 400-ամեայ յօբելեանի փակման հանդէսը։

Քանի որ այդ ասնը մեր հոգու, մտքի և քաղաքակրթութեան ասնն է, ցանկալի էր, որ այդ հանդէսին աւելի ճոխ բնաւորութիւն և լայն ժողովրդականութիւն տրվի։

Յօբելեանական յանձնաժողովը չը պիտի բաւականանայ նրանով, որ կը լինեն զանազան քաղաքների և գիւղերի հայ հասարակութիւնների, ընկերութիւնների և հիմնարկութիւնների կողմից պատգամաւոր-կայացուցիչներ. նա պիտի աշխատի ունենալ պաշտօնական ներկայացուցիչներ այն բոլոր հիմնարկութիւններից, որոնք գտնվում են Էջմիածնի տեսչութեան տակ։

Այդ հանդէսը իբրև մի զուտ կուլտուրական հանդէս պիտի գրաւի մեր բոլոր կրթական հաստատութիւնների թէ հոգաբարձական մարմինների, թէ ուսուցչական խմբերի և թէ աշակերտութեան պաշտօնական ներկայացուցիչներ, որոնք գալով երկրի զանազան կողմերից՝ այդ օրը պիտի ապրեն միենոյն ոգով և զգացումներով։

Պիտի հնարաւորութիւն տալ մանուկ սերընդին խիտ շրջան կազմելու այն մարդու շիրիմի շուրջը, որը նրանց մնուցանում և խօսեցնում է ներկայումս ու պատրաստում ապագայի համար։

Մեր մտաց սերնդի այսպիսի մանակցութիւնը կունենայ իր օգտակար ազդեցութիւնն ու նրան կը կապէ իր ազգի անցեալի հետ, զարթեցնելով նրա մէջ սէր դէպի ամեն մի կուլտուրական ձեռնարկութիւն և կը պատրաստէ նրանից լաւ մարդիկ և լաւ ազգասէրներ։

Ռուբէն Տէր-Գրիգորեան

Դերբենտ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆ

—

Անցեալ անգամ խօսելով Բագուի Կուլտ. Մուրեթեան հրատարակչ. սեկցիայի որոշման մասին, մոռացանք յիշել, որ նա որոշել է նաև հիմնել մի տպարան ի յիշատակ մեծ յօբելեանի։ Բացի դրանից մեզ հաղորդում են, որ նա որոշել է իր հրատարակութիւնները տարածել հայ ժողովրդի մէջ ձրիաբար և դրա համար մտադիր է կոչ անել հասարակութեան, որ ուներ անձինք որոշ գումարներ նուիրեն այդ նպատակով։

Ի դէպ պէտք է ուղղենք մի սխալ։ Մօպասանի պատմուածքների շարքում յիշված «Սիրելի բարեկամ» պատմուածի ֆրանսիական անունը ոչ թէ «Cher Ami» է, այլ «Bel Ami»։

Ամերիկայի «Ազգ» շաբաթաթերթը ողջունելով համազգային յօբելեանը և դպրոցական ֆօնդը, յորդոր է կարդում Ամերիկայի հայ հասարակութեան՝ ջերմ մասնակցութիւն ունենալ։

Որովհետև մեզ դիմում են զանազան կողմերից հարցմունքով, թէ ինչ ձևով պէտք է մասնակցել համազգային յօբելեանին, հոկտեմբերի 12-ին և 13-ին, հարկաւոր ենք համարում յայտնել, որ ամեն մի քաղաքի, աւանի, համայնքի հայերը, անհատները և հաստատութիւնները պէտք է շնորհաւորեն յօբելեանը կաթողիկոսի անունով կամ հեռագիրներով, կամ ներկայացուցիչներով և պատգամաւորութիւններով, իսկ տեղերում պէտք է կազմակերպել հանդէսներ, դասախօսութիւններ, երեկոյթներ, ցերեկոյթներ և պէտք է կատարեն հանգանակութիւն յօգուտ դպրոցական ֆօնդի և ուղարկեն Էջմիածնի կենտ. յօբել. յանձնաժողովին։ Նը-էդիները կարելի է ուղարկել նաև «Մշակի» խմբագրութեան, որ կը հասցնէ ըստ պատկանելոյն։ Թող ամեն մի անհատ նոյնիսկ իր լուման ձգէ ընդհանուր գանձանակի մէջ։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

21 և 22 սեպտեմբերի

Վիեննա.—Մինիստրների խորհրդակցութիւնը գեներալ-շտաբի պետի մասնակցութեամբ տեսաց 9 ժամ։ Սկզբունքային համաձայնութիւն կայացաւ համապետական նախահաշիւի առաջին 6 ամսեակի վերաբերութեամբ։ Խորհրդակցութիւնը վճռեց աւելացնել նորակոչ զինուորների թիւը 35,000 մարդով փոխանակ զինուորական մինիստրի պահանջած 40,000-ի։ Առաջիկայ 4—5 տարում կառուցվելու են երկու զրէդնօուտ։ Լրագիրների ասելով՝ ռազմի պատրաստութեան համար նորից խընդրվելու է յատկացնել մօտ մի միլիարդ։

—

Վիեննա.—«Գօր. Բիւրօյի» տեղեկութիւնների համաձայն, գահառաժանը հոկտեմբերի վերջերին իր կնոջ ուղեկցութեամբ այցելելու է անգլիական թագաւորական զոյգին Վինձօրում, ապա Պօրտլէնդի դքսին՝ նրա Վէլբէկ ամրոցում։

—

Թէհրան.—Սալար-ուդ-Դօվլէն պարսիկ կօզակների հսկողութեամբ մեկնեց Քիրմանշահից դէպի Ղազվին։

—

Պարիզ.— Մինիստրների խորհուրդը լիազօրեց ծովային մինիստրին՝ ձեռնարկել ծովային ոյժերի վերակազմութեան, համաձայն ծովակալութեան խորհրդի որոշումների։ Իւրաքանչիւր նաւատորմի մէջ լինելու են 8 զրահանաւ։ Առաջին երկու նաւատորմերը դրվելու են ռազմի վիճակում։

—

Ռիօ-դէ-Ժանէյրո.—«Բարբօրէմա» շոգենաւը Ջրասոյզ արեց մի զինուորական նաւի։ Կարծում են, որ խեղդվել են 30 մարդ։

—

Նարմուտ.—«Գարդէնիա» շոգենաւը մթութեան մէջ ընդհարվեց «Կօրնգուտ» նաւի հետ և ընկղմվեց։ Խեղդվեցին 18 մարդ։

—

Լիսաբօն.—Ներումն ստացան 268 կալանաւոր քաղաքական յանցաւորներ։ Ամնիստիան միապետականների գլխաւոր պարագլուխների վրա չէ տարածվում։

—

Լօնդօն.—Էդմբուռնում սուֆրաժիստուհիները հրդեհեցին երկու մեծ տուն։ Կալանաւորված են երկու հոգի։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՂՂՎԱԾ «ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Վիեննա, 25 սեպտ. (Ն. տ.)

«Մշակի» երրորդ հրատարակչին՝ Ց. Տէր-Մարկոսեանի մահվան առիթով խմբագրութեանդ կը յայտնեմ իմ անկեղծ ցաւակցութիւնս։ Հ. Յովսէփ Տէր-Մարգարեան

(Վիեննական Մխիթարեան)

—

(Հեռագրով)

Պէրա (Կ. Պոլիս), 18 սեպտեմբերի

Նոր վերադառնալով ճանապարհորդութիւնից խմացայ և ողբում եմ սիրեցեալ Յովհաննէսի, իմ խեղճ բարեկամի մահը։

Խաչատուր Մալումեան

—

Աստրախան, 14 սեպտ.

«Մշակի» տոկուն ու անխոնջ աշխատակից Յովհ. Տէր-Մարկոսեանի մահվան առիթով յայտնում եմ իմ խորին ցաւակցութիւնը։ Վարդան Վարդանեան

—

Ղամարլու (Բօրչալուի շրջան), 21 սեպտ.

«Մշակի» № 199-ում կարդացի թանգագին կորսան՝ Յովհ. Տէր-Մարկոսեանի մահվան բօթաբեր գուժը։ Համեստ գործչի անդառնալի կորուստը խորապէս ազդեց ինձ վրա։

Հանգիստ ապնիւ մարդու ապնիւ ահիւնին։

Իսահակ Տանտանեան

—

Թարթառ, 18 սեպտեմբերի

Այսօր միայն, թերթելով «Մշակի» կուտակված համարները, դառնավիշտ կսկիծով տեղեկացայ բազմերախտ ժուրնալիստ և Արծրունեան գաղափարների անվեհեր դրօշակակիր Յովհաննէս Տէր-Մարկոսեանի մահվան մասին։ Հանդուցեալը, իսկ որ, համեստութեան քօղն երեսին ներկայացնում էր մարմնացեալ գործունէութեան, անշահախնդիր եռանդի և անդուլաճան գաղափարականութեան մի օրինակելի տիպար։

Ընդունեցէք, թէև անադան, ձեր համեստ գաւառական թղթակցի անհուն վշտակցութիւնը և ցաւակցութիւնը «Մշակի» խմբագրութեան անդամներից մէկի կորստեան առիթով։ Յարգանք լաւագոյն գործչի անմեռ յիշատակին։ «Մահ խմացեալ՝ անմահութիւն է»։ Մենաօր-Միրաժ

ՄԻ ԱՌԱՋԱՐԿԻ ԱՌԻԹՈՎ

Զափաղանց յաճախ հայ դրամատիկական գրողների և թարգմանիչների կողմից լսվում է գանգատ, որ գաւառական և երբեմն նոյնիսկ կենտրօնական քաղաքներում ներկայացվում են պիէսներ՝ առանց հեղինակի կամ թարգմանչի թոյլտուութիւնը ստանալու և հօնօրար վճարելու։

Ինչ վերաբերում է թոյլտուութիւն ստանալուն, պէտք է խոստովանել, որ դա իսկապէս երբեմն անհնարին է լինում զանազան պատճառներով։ Այսպէս, օրինակ, դէպքեր են լինում, երբ այս կամ այն պիէսի ներկայացնելը վճռվում է ներկայացումից մի քանի օր առաջ, ուստի այն թատերական խմբերը, որոնք վաղօրօք՝ այս կամ այն պատճառով՝ չեն ստացել հեղինակի թոյլտուութիւնը, ուզենան էլ՝ չեն կարողանայ դիմել հեղինակին, քանի որ հեղինակի հետ հաղորդակցութիւնը անպայման կը խլի աւելի ժամանակ, քան մի քանի օր, մանաւանդ որ երբեմն յայտնի չէ լինում հեղինակի կամ, ևս առաւել, թարգմանչի հասցէն։ Իսկ պահանջել խմբերից, որ նրանք ունենան բոլոր հայ գրողների և թարգմանիչների հասցէները—դա առնուազը անմտութիւն կը լինէր։

Մասամբ նոյնը կարելի է ասել և հօնօրար ուղարկելու մասին։ բայց միմիայն մասամբ, որովհետև հօնօրարը կարելի է և ուշացնել ու ուղարկել ըստ պատկանելոյն՝ առաջին պատեհ առիթ ունենալուն պէս։

Սակայն մենք գիտենք, թէ որքան են այս դէպքում շահագործվում հեղինակներն ու թարգմանիչները, յաճախ դիտաւորեալ, իսկ երբեմն շնորհիւ միամտութեան։ Վերջին խօսքս այն երևոյթի մասին է, որ մեր հասարակութեան մէջ դեռ արմատ չէ ձգել գրական իրաւունքի գիտակցութիւնը։ Բազում մարդիկ կան մեր մէջ, որոնք պարզ կերպով չեն կարողանում պատկերացնել իրանց համար, որ գրական աշխատութիւնը նոյնպէս մի սեփականութիւն է, ինչպէս, օրինակ, տունը, կալուածքը, և որ եթէ օգտվում ես մի որևէ գրական աշխատանքից՝ պիտի նոյնպէս փող վճարես, ինչպէս կալուածքից օգտվելու համար։

Ինչ որ է, այսպիսի գրութիւն ստեղծելուն մէջ նոյնքան մեղաւոր են շահագործվողները, որքան և շահագործողները։

Դրանով ես ուզում եմ ասել, որ վաղուց արդէն հասունացած է անհրաժեշտութիւնը՝ ունենալ մի այնպիսի հիմնարկութիւն, մի այնպիսի պրօֆեսիօնալ միութիւն, որ պաշտպանէր դրամատիկական գրողների շահերը։

Կարող են ասել, որ այդ դերը կարող է վերցնել իր վրա Հայ Գրողների Ընկերութիւնը և, եթէ չեմ սխալվում, ի թիւս այլ նպատակների, այս մէկն էլ կայ Ընկերութեան կանոնադրութեան մէջ։ Սակայն բանը նրանումն է, որ յիշեալ Ընկերութիւնը, բացի զուտ պրօֆեսիօնալ գործունէութիւնից, ունի և այլ ծրագիրներ. և այս կամ այն գրողը կարող է և չը լինել Ընկերութեան անդամ։

Իսկ այն պրօֆեսիօնալ միութիւնը, որի մասին էր մեր խօսքը, առանց այս կամ այն գաղափարական ընոյթը կրելու, լինելու է մի հիմնարկութիւն, որի միակ գործունէութիւնը կայանալու է դրամատիկական գրողների շահերի պաշտպանութեան մէջ. և միայն այդքան։ Զանազան քաղաքներում և այլ վայրերում, ուր կայ թատրոն, միութիւնը ունենալու է ագենտներ, որոնք լիազօրված կը լինեն պաշտպանելու այն թատերագրողների իրաւունքները, որոնք միութեան անդամ կը լինեն։

Այդպիսի միութիւններ, ինչպէս յայտնի է, գոյութիւն ունեն ամենուրեք։ Այսպէս, օրինակ, Ռուսաստանում երկու այդ տեսակի միութիւններ կան, մէկը Պետերբուրգում, միւսը Մօսկվայում։ Այդ միութիւններին անդամ կարող է գրվել իւրաքանչիւր անձ, որ լոյս է ընծայել գոնէ մի դրամատիկական կամ երաժշտական աշխատութիւն։

Այս կերպի մի միութիւն անհրաժեշտ է ստեղծել և մեզ մօտ։ Ճիշդ է, դրամատիկական և երաժշտական գրողների թիւը շատ փոքր է մեզանում, բայց եթէ հաշուելու լինենք թարգմանիչներին ևս, որոնց թիւը ընդհանրապէս աւելի շատ է, քան հեղինակները, կը տեսնենք, որ միութիւնը այնուամենայնիւ կարող է մի քանի տասնեակ անդամներ ունենալ։ Այդքանը բաւական է գործունէութեան հիմքը դնելու համար, մանաւանդ որ սկզբում կարելի է ագենտուրա ունենալ միայն աչքի ընկնող վայրերում։

Սակայն այդ բոլորը գեղեցիկ իդէաներ են, որոնք ոմ գիտէ երբ կիրագործվեն։

Եւ ահա օգնութեան է գալիս մասնաւոր մի նախաձեռնութիւն։ Վաղարշակ Թումանեան «Մշակի» № 207-ի մէջ առաջարկում է հայ դրամատիկական գրողներին լիազօրեն իրան Բագու քաղաքում վարել թատրոնական ագենտի դերը։

Կարելի է չը համաձայնվել Վ. Թումանեանի հետ մի քանի մանրամասնութիւնների վերաբերմամբ, սակայն, հիմնական առաջարկը միանգամայն համակրելի է և ընդունելի։

Եւ, իսկապէս, եթէ գոնէ մի քանի վայրերում գտնվէին մարդիկ, որոնք Վ. Թումանեանի 'օրինակին հետևելով՝ առաջարկէին թատերագրողներին իրանց աջակցութիւնը, այն ժամանակ գոնէ մասամբ կիրագործէր այն, ինչ որ ապագայում իրագործելու է հայ թատերագրողների միութիւնը։

Լեոն Քալանթար

ԳՈՒՑԷ ԹԻՐԻՄԱՑՈՒԹԻՒՆ Է

—

«Մշակի» ընթերցողները կարդացին № 206-ի մէջ Գօրուց գրված թղթակցութիւնը այն մասին, որ Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը ինքը նշանակել է այդ քաղաքի համար քահանայ, մինչ քահանայի ընտրութիւնը, հայոց եկեղեցու դաւանանքի և սովորութեան համաձայն, անպայման վերապահված է ծխական ժողովրդին։ Եւ Գօրու ծխական ժողովուրդը, որ հրաւիրված է եղել ծխական ժողովի՝ այդ ընտրութիւնը կատարելու համար, չէ կարողացել գործադրել իր իրաւունքը, որովհետև ժողովը հրաւիրող գործակալ քահանան յանկարծ մեկնել է Թիֆլիս և յետոյ վերադառնալով յայտնել, որ առաջնորդն արդէն նշանակել է քահանայ։

Այդ տեղեկութիւնը այնքան տարօրինակ է թւում մեզ, որ մենք աւելի տրամադիր ենք կարծելու, թէ գործի մէջ թիւրիմացութիւն կայ կամ գործակալ քահանայի կողմից որևէ սխալ է կատարված։ Որքան էլ մենք վերջին ժամանակներս ընտելացել ենք Մեսրոպ եպիսկոպոսի մի քանի հակաժողովրդական գործողութիւններին, բայց և այնպէս դժուարանում ենք հաւատալ, որ մի ուսումնական եկեղեցական այդպէս հեշտութեամբ ոտնակոխ անէ ժողովրդի բազմարդիւն և նուիրագործված իրաւունքը։ Ուստի կը սպասենք լրացուցիչ տեղեկութիւնների կամ հերքման։ Իսկ եթէ, դժբաղդաբար, արդարանայ հաղորդված լուրը, այդ դէպքում Գօրի քաղաքի ծխական ժողովրդի վրա բարոյական պարտականութիւն կայ՝ բողոքել բուռն կերպով առաջնորդի հակաժողովրդական վարմունքի դէմ։

Հ. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Երէկ, սեպտեմբերի 23-ին, Ա. Քալանթար ուղևորվեց Պետերբուրգ սառցային գնացքին հետևելու նպատակով։ Նա ճանապարհ ընկաւ խմբենէր Օհանջանեանի և Ա. Էնֆիաճեանի հետ միասին աւտոմօբիլով Վլադիկավկազի վրայով, որպէսզի հանդիպին գնացքին Բեսլան կայարանում և այնուհետև միասին գնան մինչև մայրաքաղաք։ Գնացքը կանգ կառնի մի քանի ժամով Կիսլովոդսկում վերցնելու այնտեղից մի քանի ապրանքներ։ Այնուհետև կուղևորվի Ռոստով, Խարկով, Կուրսկ, Մօսկվա և Պետերբուրգ։

✦ Կիրակի, սեպտեմբերի 22-ին, մասնակցների մի խումբ Ա. Քալանթարի ղեկավարութեամբ այցելեց Մեծ-Լիլօ գիւղը և այնտեղ փորձնական մի ուսումնասիրութիւն կատարեց՝ վերաբերեալ կենդանաբուծութեան։ Ինչպէս յայտնի է, երկրագործութեան դեպարտամենտը նշանակել է 8000 ռուբլի մի գումար ուսումնասիրելու կովկասեան կենդանաբուծութիւնը։ Ահա այդ ուսումնասիրութեան համար հրաւիրված խումբը կիրակի օր ծանօթանում էր ուսումնասիրութեան եղանակի հետ վերոյշեալ գիւղում։ Մասնագէտները արին մանրամասն հարցափորձեր անտեսական և կենդանաբուծական հարցերի մասին և չափեցին մի քանի կենդանիներ։ Հետազօտութիւնը կը սկսվի հոկտեմբերի 1-ից մի քանի գաւառներում։

✦ «Н. В.»-ում կարդում ենք. «Կովկասում նախատեսվում են վարչական փոփոխութիւններ։ Փոխարքայի քաղաքացիական օգնական սենատոր Վատացին թողնում է իր պաշտօնը։ Թիֆլիսի նահանգապետ Զերնեակին նոյն պաշտօնով տեղափոխվում է Գանձակ։ Երևանի նահանգապետ բարոն Տիզենհաուզենը հրաժարական է տալիս։ Նրա տեղ նշանակվում է Գանձակի նահանգապետ Կօվալօվը։ Թիֆլիսի նահանգապետ նշանակվում է փոխ-նահանգապետ Պանօվը։ Ի լրացումն այս լուրերի, մեր կողմից կաւելացնենք որ, ինչպէս խօսում են, Թիֆլիսի ոստիկանապետ գեն. Զասիպկինը նշանակվելու է Քութայիսի նահանգապետ Սլավանինի փոխարէն, իսկ Թիֆլիսի ոստիկանապետի պաշտօնում նշանակվում է գեն. Շչիպրօվսկին։

✦ Ցիշեցնում ենք, որ այսօր Թիֆլիսի ժողովարանի ձմերային շինութեան մէջ նշանակված է Վիեննայի համալսարանի պրօֆեսոր գօտ. Սարժիդօվսկիի դասախօսութիւնը «Հայկական գեղարուեստը և նրա նշանակութիւնը Արևմուտքի և Պարսկաստանի համար» թեմայով։ Դասախօսութեան (գերմաներէն) ժամանակ ցոյց կը տրվեն շատ պատկերներ մոգական լապտերով։ Սկիզբն է երեկ. ժ. 8-ին։

✦ «Вест. Вр.»-ն արժանահաւատ աղբիւրից տեղեկացել է, որ Վրաստանի եկեղեցիների պաշտօնի համար առաջ է մղվում Դօնի շրջանի եպիսկոպոս Վլադիմիրի թեկնածութիւնը՝ վերջինիս ցանկութեամբ։

✦ Թիֆլիսից հեռագրում են «Пр. Край»-ին թերթին. «Դատախազը յայտնեց էլեքտրաքարշի ծառայողների լիազօրներին, որ նրանց ձերբակալված ընկերները կարձակվեն, եթէ քննութիւնը ցոյց տայ, որ գործադուլը չէր կրում քաղաքական ընաւորութիւն»։

✦ Թիֆլիսում մի խումբ անձեր հիմնել են մի ընկերութիւն՝ «Թիֆլիսի տպարանական, լիտոգրաֆիական և կազմարարական բանւորների ընկերութիւն» անունով, որի կանոնադրութիւնը ներկայացված է պատշաճ իշխանութեանը ի հաստատութիւն։

✦ Թիֆլիսի բօրային կօմիտէի նախաձեռնութեամբ, եկող տարվայ սկզբին Թիֆլիսում կազմակերպվելու է կովկասեան անասնավաճառների համագումար՝ անասնապահութեան զարգացման ու բարելաւման խնդիրների համար։

✦ Երէկ վերադարձաւ Թիֆլիս երկրագլխ. կառավարչի կովկասեան լիազօր Շաշկօվսկին։

✦ Խմբագրութիւնը ստացաւ Լևոն Քալանթարի մի աշխատութիւնը՝ «Ծանր երազ» վերնագրով, պիէս 4 գործ.։ Պիէսը, որ շօշափում է մեր ժամանակակից կեանքի մի քանի արտայայտութիւնները, առաջին անգամ ներկայացված է Թիֆլիսում անցեալ 1912—13 թատերական սեզօնում հոկտ. 22-ին Արտիստական թատրօնի բեմի վրա։

✦ Անցեալ օգոստոս ամսում առաջին գիշերային ապաստարանում գիշերել են 164 հոգի, որոնցից 8 հոգի կանայք են եղել, և գիշերել են 2431 անգամ։ Ըստ ազգութեանց նրանք բաժանվում են հետևեալ կերպով. ռուսներ՝ 69 տղամարդ և 8 կին, հայեր՝ 49 տղ., վրացիներ՝ 26 տղ., լեհեր՝ 2 տղ., գերմանացիներ՝ 3 տղ., օսեր՝ 2 տղ., հրեայ՝ 1 տղ. յոյն՝ 1 տղ. և զանազան ազգութիւններից 3 տղամարդ։

Տարեկան ծախսը հասնում է մօտաւորապէս 30—35,000 ռուբլու։

1881—1912 թուերին, այն է՝ երեսունմէկ տարվայ ընթացքում, դպրոցը ընծայել է ազգին գրեթէ 240 աշակերտներ։ Այդքան ժամանակաշրջանում ծախս է եղել մօտ 887,000 ռուբլի։

Սանասարեան վարժարանը հակառակ իր նիւթական ապահովված վիճակին, հակառակ իր տարեկան այդքան խոշոր բիւջէին՝ չէ տուել այնքան արդիւնք, որքան սպասելի էր և իսկապէս արդար էր սպասել։ Պատճառները շատ են։ Գլխաւոր տեղն է բռնում այն հանգամանքը, որ դպրոցը, լինելով Թիւրքահայաստանի մի յետ ընկած անկիւնում, Երզրումում, չէ ունեցել արտաքսրոցական նպաստաւոր միջավայր։ Աւելացրէք դրան նաև գիշերօթիկի խմբրեցնող դրութիւնը, տեսուչների՝ դպրոցում հաստատած պահպանողական ու հին ըէժիմը և այլն։

Աշակերտական խլրտումները՝ որպէս այդպիսի՝ սկսվել են 1905-ին և նոր թափ ստացել 1908-ին, սահմանադրութեան հրաչակումից անմիջապէս ետք։ Աշակերտական խլրտումները ուղղված էին գլխաւորապէս տեսուչների դէմ։ Այդ շարժումի անուղղակի կազմակերպիչներն էին Դաշնակցութեան կոմիտէի անդամները։ Կ. Պոլսի խնամակալութեան ականջին։ 1911/12 ուսումն. տարվայ կէսին, խնամակալութեան հրամանով պաշտօնանկվեց վերատեսուչ պրօֆ. Խաչատրեանը. ծագեց սուր կօնֆլիկտ Երզրումի տեղական հոգաբարձութեան (դաշնակցական) և Կ. Պոլսի խնամակալութեան միջև։ Երևան եկան աշակերտական նոր խլրտումներ, դասերը խանգարվեցին, վերջապէս հաւիւ հաղ կարելի եղաւ դեռ ժամանակից էլ առաջ վերջացնել ուսումնական տարին։ Կ. Պոլսի խնամակալութիւնը յայտարարեց Երզրումում Սանասարեան դպրոցը փակված ու փոխադրված Սեբաստիա։ Երզրումի Դաշնակցութեան օրգան «Ցառաջը» շատ նպաստեց կօնֆլիկտի կէսին էր՝ հնօր ու տիրապետող։ Նրա խօսքը պատգամ էր թէ աղա-էֆէնդիների և թէ իր հետևորդների համար։ Այդպէս էր գրութիւնը սահմանադրութեան հռչակման առաջին տարիներում։ Անցան օրերը, ժողովրդի աչքից չքացաւ իլլիւզիան, խախտվեց այժերի յարաբերութիւնը, և Դաշնակցութիւնը մնաց հրապարակի վրա իր դրական ու բացասական բոլոր կողմերով։

Դաշնակցականները ամբաստանում էին դպրոցի վարիչներին ապիկարութեան մէջ, բերում էին ճիշդ և սխալ փաստեր։ Բայց երբ իրանք կանգնեցին գործի գլուխ, էլի չը ստեղծվեց նախկինից տարբեր վիճակ։ Պարզվեց, որ պայքարը մղվելիս է եղել Դաշնակցութեան և հակառակորդների միջև ոչ թէ ժողովրդի ու դպրոցի օգտին, այլ աթոռների, պաշտօնների համար. «ընկերների գլխաւորին» տեղ էր փնտռում զետեղվելու համար ու գտաւ։

Այդ դրութիւնը հաւիւ տուեց մէկուկէս տարի։ Դաշնակցութեան ընկճված հակառակորդները անգործ չը մնացին. նրանք ձեռք առան ամեն տեսակի ներելի և անթոյլատրելի միջոցներ, սոսկ նպատակ ունենալով յաղթանակ շահել։ Ծայր տուին փոխսուլները Կ. Պոլսի խնամակալութեան ականջին։ 1911/12 ուսումն. տարվայ կէսին, խնամակալութեան հրամանով պաշտօնանկվեց վերատեսուչ պրօֆ. Խաչատրեանը. ծագեց սուր կօնֆլիկտ Երզրումի տեղական հոգաբարձութեան (դաշնակցական) և Կ. Պոլսի խնամակալութեան միջև։ Երևան եկան աշակերտական նոր խլրտումներ, դասերը խանգարվեցին, վերջապէս հաւիւ հաղ կարելի եղաւ դեռ ժամանակից էլ առաջ վերջացնել ուսումնական տարին։ Կ. Պոլսի խնամակալութիւնը յայտարարեց Երզրումում Սանասարեան դպրոցը փակված ու փոխադրված Սեբաստիա։ Երզրումի Դաշնակցութեան օրգան «Ցառաջը» շատ նպաստեց կօնֆլիկտի մեծացմանն. «Ցառաջը» այդ օրերին դառել էր մի զամբիւղ հայհոյանքներով ու մակերեսային թեթև յօդուածներով միայն լեցված։ Լուրջ քննադատութիւն, սառն տրամաբանութիւն խսկի էլ չը կար։

Խնամակալութիւնը դպրոցի փոխադրութիւնը արդարացնում էր երկու պատճառներով. նախ այն՝ որ պէտք էր փրկել դպրոցը Դաշնակցութեան անմիջական ազդեցութիւնից։ Խնամակալութեան կարծիքով, շնորհիւ աշակերտների կուսակցականութեան ուսումնական խաղաղ աշխատանքները խանգարվել էին և դպրոցը դառել էր դաշնակցութեան պրօպագանդայի բոյն և այլն։ Այդ մեղադրանքները շատ քիչ չափով ճիշդ էին. հակառակորդները դիտումնաւոր կերպով չափազանցրել էին երևոյթները։

Խնամակալութեան՝ որպէս դպրոցի տեղափոխման համար ցոյց տուած այս առաջին պատճառը հիմնաւոր չէր, աւելի շուտ առիթ էր, քան պատճառ։

Երկրորդ պատճառը չը նայած որ գլխաւոր դերն էր խաղում, բայց միշտ էլ պահվեց դաղտնի։ Բացատրենք։ Կ. Պոլսի խնամակալութեան ազդեցիկ անդամ, նախկին հայ մինիստր Նորատունկեան էֆէնդին, նախատեսելով որ ուշ կամ վաղ Երզրումը պէտք է լինի թատերավայր ռուս-թիւրք ընդհարման, խելօքութիւն համարեց նախօրօք զգուշանալ այդ վտանգից ու փոխադրել դպրոցը այնպիսի մի շրջան, որը դուրս լինի ընդհարումների շրջանակից։ Այս մտադրութիւնը տասը տարուց աւելի է որ զբաղեցրել է Նորատունկեան էֆէնդիի ուղեղը, ու այժմ միայն առիթ գտաւ իրականանալու։ Այս է պատճառը, որ խնամակալութիւնը բաց-աշկարա արհամարհեց կտակի որոշ տրամադրութիւնը՝ վարժարանը պահել Մեծ-Հայքի սահմաններում։

Դաշնակցականներն ու հակառակորդները

◆ Հաղորդում են, որ ռուսաց սինոդը ներկայումս նիւթեր է ժողովում բապտիստական կազմակերպութիւնների գործունէութեան մասին, որպէս զի ներքին գործերի մինիստրի առաջ միջնորդէ՝ ճանաչելու բապտիստներին վտանգաւոր աղանդ։

◆ Արեւելեան լեզուների օֆիցէրների դպրոցում ամբողջ դասընթացքն աւարտեցին 6 հոգի։

◆ Բագուի նաւթարդիւնաբերողների XXXI համագումարը կայանալու է Բագուում նոյեմբերի 30-ին։

◆ Բագուի, ինչպէս յայտնի է, վերջերս տեղի ունեցաւ արքունի նաւթաբեր հողաբաժինների աճուրդ մանաւանդ անձանց մասնակցութեամբ։ Ինչպէս այժմ հաղորդում են, այդ աճուրդը հաստատելու գործը սենատում քննելու է հոկտեմբերի կէսերին։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Արքունական Թատրոն

Բիզէի «Կարմէն» օպերան, որ ներկայացվեց շաբաթ, սեպտեմբերի 21-ին, ունեցաւ ընդհանուր առմամբ նպաստաւոր աջողութիւն։

Կարմէնի դերը, որ պահանջում է խաղացողից ոչ միայն ձայնական բաղդատութիւն, այլև համապատասխան խաղ, գընչական պարեր և հարուստ միմիկա, իր գեղեցիկ կատարողն ունեցաւ այդ երեկոյ յանձին երգչուհի Տիխօնովայի, որն արժանացաւ բուռն ծափերի։ Տիխօնովա օժտված է օպերային արտիստին յատուկ բոլոր շնորհներով և, անշուշտ, ինչպէս անցեալ անգամ ևս շեշտել էինք, ներկայ սեզոնի խմբի զարդերից մէկը կարող է համարուել։

Տիխօնովային զուգընթաց օրինակելի խաղընկեր հանդիսացաւ Դոն-Խոզէի դերում Լազարեվ։ Շնորհալի երգիչը, որին տեսել ենք անցեալ սեզոններին ևս միեւնոյն դերում, այս անգամ թէ ձայնական և թէ, գլխաւորաբար, իր ուժեղ դրամատիկական խաղով թողեց այնպիսի մի խորը տպաւորութիւն, որ ամբողջապէս լի թատրոնը խլացուցիչ ծափահարութիւններով ու «բրաւո»-ներով վարձատրեց տաղանդաւոր արտիստագէտին։ Տիխօնովա և Լազարեվ ստացան մի-մի ծաղկեկողով։

Աջող կատարում ունեցաւ երգչուհի Կարպովա՝ Միքայէլայի դերում, սակայն արտաքինով և մարմնի կազմուածքով Կարպովա անհամապատասխան էր մատաղահաս գեղջկուհու տիպը ներկայացնելու, որով և մասամբ փչացնում էր իլլիւզիան։

Տօրբէադորի դերում հանդէս էր եկել Դիմիտրիէվ, որի ձայնը հնչում է բաւականին ազատ և ախորժալուր։ Իր տանձնած պարտեան Դիմիտրիէվ կատարեց բարեխղճօրէն։

Օպերայի անսամբլային և օրկէստրային մասը նոյնպէս անցաւ հարթ շնորհիւ Զախ. Պալիէվի համաչափ ղեկավարութեան։

Զորրորդ գործողութեան ընթացքում պրիմա-բալերինա Բաուէրզակս և բալետային խումբը, մասնակցութեամբ բալետմէյստեր Վակարէցի, կատարեցին տեխնիկապէս բարդ մի քանի պարեր, որոնք թողեցին հանդիսականների վրա լաւ տպաւորութիւն՝ արժանացնելով կատարողներին ջերմ ծափերի և bis-երի։

Կիրակի, սեպտեմբերի 22-ին, խաղացվեց «Եւգէնիյ-Օնէգին» օպերան, որ ունեցաւ նոյնպէս մեծ աջողութիւն։ Այդ երեկոյ, ի միջի այլ դերակատարների, աչքի էր ընկնում Բօբրովի խելացի ու մտածված խաղը Օնէգինի դերում։

Այսօր երեկոյեան կը ներկայացվի «Բօրիս Գոդունով» օպէրան։ Х.

—

Վրաց Թատրոն

Վրաց դրամատիկական խմբի ներկայացումների սեզօնը սկսվեց դեռ սեպտեմբերի 15-ին Ազնուականութեան թատրոնում։ Ներկայացվեց այն օրը Սումբատովի «Դաւաճանութիւնը»՝ թատրօնը ծայրէ ի ծայր լցրած բազմութեան ներկայութեամբ։

Խմբի երկրորդ ներկայացումը տեղի ունեցաւ կիրակի, սեպտ. 22-ին, երբ խաղացվեց Սենկէվիչի վէպից պիէսի վերածված «Ցոն երթասը», որին և մենք ներկայ գտնվեցինք։

Թէև այդ օրը մասնակցողների թւում չը կային Ալէքսէեվ-Մեսխիէվը և Գէդէվանօվը, որոնցից առաջինը Պէտրօնիոսի, իսկ երկրորդը՝ Քիլօնի դերում ուղղակի աննման են, բայց և այնպէս այդ դերերը վերցրած Գունեան և Պարվէլին կարող եղան բաւարար դուրս գալ։

Առանձնապէս ջերմ ընդունելութիւն գտաւ Մարկիոսի դերակատար Զարդալիշվիլին, որ խաղում է զգացված տեմպերամենտով և հոգեբանական հետաքրքրականութեամբ։

Լաւ էր նաև տ. Մդիվանին Լիդիայի դերում։

Քրիստոնեաների աղօթքի տեսարանը երգեցողութեամբ հանդերձ տպաւորիչ էր։

Դեկօրացիաները և բեմադրութիւնը ցոյց են տալիս խմբի ըժիտեօրներ Շալիկաշվիլիի և Մեսխիէվի նուրբ ճաշակը։

Թատրօնում վերակշռում էր ուսանող մասը։

Հետեւալ անգամ կը տրվի առաջին անգամ նոր ինքնուրոյն պիէս։ Ես.

—

Վաղը կը բացվի ռուս դրամատիկական խմբի ներկայացումների սեզօնը Արտիստական թատրօնում։ Խմբի ղեկավարը Թիֆլիսի թատրօնական հասարակութեանը ծանօթ Զարէչնին է։

Սեզօնի բացման առիթով կը ներկայացվի առաջին անգամ Թիֆլիսում Ս. Գարինի «Моряки» 5 գործ. պիէսը։

ՄԱՄՈՒԼ

«Հօրիզօն» թերթը, ինչպէս գիտենք, վերջերս մի արշաւանք սկսեց Էջմիածնի դէմ և սաստկացրեց այդ արշաւանքը առաւել, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մերժեց «թեմական» յօբել. յանձնաժողովի միջնորդութիւնը՝ յօգուտ «Հայ գրողների ընկերութեան» գրական ֆօնդի համար թոյլատրութիւն ստանալ։ Այդ օրից «Հօրիզօնը» կորցրել է ամեն չափ և սահման և կանգ չէ անում նոյնիսկ զեմագոգիական միջոցների առաջ։ Անցեալ շաբաթ, իր № 208-ի մէջ նա հորից տպեց մի առաջնորդող յօդուած Էջմիածնի և նրա այժմեան վարիչների դէմ, որի մէջ փոխանակ լուրջ և ծանրախոհ քննադատութեան՝ խուժանային կրքերը գրգռելու ջանքերը աւելի մեծ տեղ են գրաւում, բայց այնքան անհիմն պատճառաբանութիւններով, որ թողնում են «մի բաժակ ջրի մէջ փոթորիկ յարուցանելու» տպաւորութիւն։

Այդ տպաւորութեան ներքոյ «Тифл. Лист.» թերթը, այս կիրակի օրվայ իր համարում (№ 215) զետեղել է մի յօդուած «Бутафорскій ураганъ» («Բուտաֆօրեան մրրիկ») վերնագրով, որ հարկ և համարում ենք ամբողջապէս առաջ բերել, թողնելով մեր կարծիքը թէ այդ յօդուածի և թէ «Հօրիզօնի» յարուցած արշաւանքի մասին յաջորդ անգամին։

Ահա այդ յօդուածը.

«Հօրիզօն» հայ թերթը սեպտ. 18-ի իր № 208-ում յարձակվել է Էջմիածնի և իրը թէ այդտեղ տիրող անկարգութիւնների դէմ։ Լրագրի խօսքով, այդ անկարգութիւնները Էջմիածնի գործունէութեան մէջ վերջին մէկ և կէս տարին արտայայտվել է նրա մէջ, որ Էջմիածինը սերմանել է երկպառակութիւն հայ հասարակութեան մէջ հայ այրուձենի գիւտի և տպագրութեան սկզբնաւորութեան համազգային յօբելեանի ասնախմբութեան հարցի մէջ, որ Էջմիածինը մի ուրիշ հարուած հասցրեց այդ յօբելեանին իր վերջին անմիտ կարգադրութեամբ, որ դպրոցների ներկայացուցիչների ձեռքով մշակված հոգեւոր դպրոցների ծրագիրը այլանդակել են Էջմիածնում և, վերջապէս, որ Էջմիածինը հասցրեց հայոց ժողովրդական դպրոցներին այնպիսի մի ծանր հարուած, որից դժուար նա կարողանայ ոտքի կանգնել առանց ծանր զոհերի։

Այդ ամենի մէջ յանցաւոր է, իբր թէ, այն «կամարիլլան», որ տիրում է Էջմիածնում ի դէմս երկու վարդապետների, այն է՝ հոգեւոր ճեմարանի վերատեսուչ և Կաթողիկոսի դիւանապետ Բաղրատ Վարդապետեանցի և սինոդի անդամ Մատթէոս Մատթէոսեանցի, որոնք այժմ ստացել են եպիսկոպոսական աստիճան, որպէս թէ, ծառայութիւնների համար։

Յօդուածի վերջում, նրա հեղինակը բացագանչում է. «Պէտք է օր առաջ և հիմնովին մաքրել Էջմիածնի մթնոլորտը, ապա թէ ոչ այնտեղ բուն դրած ազգադաւ տրամադրութիւնը այնպիսի նոր սիւրպրիզներ կը տայ հայ հասարակութեանը, որ վերջինս՝ կորցրած համբերութիւնը՝ ինքը հանդէս կը գայ և հրամայականօրէն կը թելադրէ. «Վերցուցէք ձեռները հեռու մեր ազգային կուլտուրական հաստատութիւններից»։

Այս վերջին պաթէթիկ ֆրազան մեզ յիշեցրեց 1906 թ. ժամանակները, երբ Էջմիածնում գումարվել էր այսպէս կոչված «ազգային ժողով», ուր նրա մի քանի անդամները սպառնում էին քարուքանդ անել Էջմիածինը, վռնտել այդտեղից բոլոր վարդապետներին, իսկ վանքական հողերը բաժանել շրջակայ գիւղացիներին, առանց դաւանութեան խտրութեան։

Բնորոշ զուգադիպութիւն դէպքերի։

Բայց «Հօրիզօն» լրագրի առաջնորդողի հեղինակը այնքան էլ սպառնալից չէ. նա խնայում է Էջմիածինը, վանքական հոգերը և միայն ծառանում է երկու վարդապետների դէմ։ Մենք նրանց պաշտպանելու չենք հանդիսանում։ Բնաւ։ Թող նրանք իրանց պաշտպանեն, ինչպէս կամենան։ Բայց մենք անարդար ենք համարում նրանց վրա բարդված մեղադրանքները, որովհետև նրանց ազդեցութիւնը նշանակութիւն չունի, որովհետև Կաթողիկոսն ինքը թոյլ չի տայ ոչ օքի խառնվել իր կարգադրութիւններին։

Իսկ այդ վարդապետները մեղաւոր են, պէտք է նենթադրել, այն ջանի մէջ, որ խորհուրդ չեն տուել Կաթողիկոսին հայ այրուձենի գիւտի 1500-ամեակը և աբպագրութեան 400-ամեակը յաւերժացնելու համար առաջ քշել դպրոցական ֆօնդի հետ միասին նաև գրական ֆօնդի ստեղծումը, խնդրելով դրա համար նոյնպէս Կովկասի փոխարքայի թոյլատրութիւնը՝ հանգանակութիւն կատարելու և հանգանակած գումարը յանձնելու ի լիակատար անօրէնութիւն հայ գրողների ընկերութեան։

Ցիրաւի, տարօրինակ պահանջ։

Վերջին կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ «Հօրիզօն» լրագրի կուսակիցները ասում էին, որ այս անգամ ընտրվի մի ռուսահպատակ հովուապետ, որ ծանօթ լինի մեր հայրենիքի օրէնքներին և կարգերին։

Հայերը ընտրեցին այդպիսի մի հովուապետ ի դէմս այժմեան Կաթողիկոսի, որ ծնվել և կրթվել է Ռուսաստանում, գիտէ ռուսական օրէնքները և կարգերը և իր երկար ծառայութեամբ եկեղեցուն և ժողովրդին՝ ձեռք է բերել որոշ փորձառութիւն եկեղեցու գործերը կառավարելու հարցերի մէջ։

Եւ եթէ այդ այդպէս է, հարցնում ենք. կարող էր Գէորգ V Կաթողիկոսը համաձայնել միջնորդութիւն յարուցանել նուէրների հանգանակութեան համար յօգուտ գրական ֆօնդի, որքան էլ նա յարգէր իր մայրենի գրականութիւնը և որքան էլ թանգ լինէին նրան գրչի վաստակաւորների շահերը։ Չէ՞ որ հայ գրողների ընկերութիւնը ծագել է իրանց գրողների նախաձեռնութեամբ և նրա կանոնագրութիւնը հաստատված է նահանգական իշխանութեան կողմից, որին ամբողջովին ենթարկված է ընկերութիւնը և որին նա հաշիւ է տալիս։ Ի՞նչ կայ ունի եկեղեցու պետը այդ ընկերութեան հետ։ Ոչ մի, ի հարկէ, բացի պատմական կապից։ Հետեւաբար, Կաթողիկոսը չէր կարող խիզախել այդպիսի քայլ առնելու, առաջուց իմանալով որ իր միջնորդութիւնը չի յարգվի։

Այլ բան է դպրոցական ֆօնդը։ Եկեղեցական-ծիսական դպրոցները, օրէնքով, ամբողջովին ենթարկված են Կաթողիկոսին, և սա պարտաւոր է հոգ տանել նրանց բարգաւաճման մասին թէ ըստ մտաւորական և թէ ըստ կրթական-դաստիարակչական մասի։ Դիմելով կառավարչական իշխանութեան և խնդրելով թոյլատրութիւն կազմելու դպրոցական ֆօնդ, նա դրանով ընդառաջ է գնացել իր հօտին, որ ծարաւի է գրագիտութեան, եկեղեցական-ծիսական դպրոցների ցանցի լայնացման, որտեղ հայ երեխաները, մայրենի բարբառի հետ, սովորին և ռուս լեզուն, իրրև պետական, որ նրանց հարկաւոր է իրրև ամենօրեայ հոգ կենցի համար։ Եւ դրա համար հայ հօտը իր եկեղեցու Պետին մեծ շնորհակալութիւն կանէ։

Եւ ի նպաստ «Հօրիզօնի» առաջնորդողը ասում է թշնամութիւն սերմանել հայ հասարակութեան և Էջմիածնի միջև։ Բոլորովին անտեղի կերպով ընկել է այդ լրագրի էջերում հետեւեալ շարադրանքը. «Թէ ինչպէս կընդունի հասարակութիւնն այդ մարտահրաւէրը՝ դա ապագան ցոյց կը տայ։ Բայց այժմ, առանց մարգարէ լինելու կարող ենք գուշակել, որ եթէ բանը Էջմիածնի և հասարակութեան միանմարտին հասաւ, պարտվողը յայտնապէս դէպ հասարակութիւնը չէ լինելու. անցել են արդէն, անդարձ անցել այն ժամանակները, երբ աշխարհիկ ոյժերը Կանոսա էին գնում՝ կղերից հաշտութիւն խնդրելու համար»։

Պէտք է ենթադրել, որ այս ֆրազան, ինչպէս և ամբողջ յօդուածը թիւրիմացութեամբ ընկել է «Հօրիզօնի» էջերը։ Նրա հեղինակը, յայտնապէս, շատ էլ ծանօթ չէ հայ ժողովրդի հետ, որի անունից այդպիսի աքացիներ է անում։ Հայ ժողովուրդը մինչև այսօր նայում է Էջմիածնի և ս. Գրիգոր Լուսաւորչի գահի վրա՝ իբրև իր սրբութիւն սրբոցի վրա։ Նրան դժուար է վրդովեցնել այդպիսի ֆրազաներով և յօդուածներով։ Բուտաֆորեան մրրիկը չի շարժի նրան տեղից, որովհետև ժողովուրդը շատ լաւ գիտէ իր պատմութիւնից, թէ ինչ զոհերով իր նախնիքը կարողանում էին պաշտպանել Էջմիածնի և ս. Գրիգորի գահի անխախտութիւնը։

Այդ ամենից պարզ է, թէ ինչի՞ են ծառայում առաջնորդողի հեղինակի զալարումները։ Եթէ, ինչպէս գրում է նրա հեղինակը «մեզ համար, ի հարկէ, հոգեւոր ատիճանները ոչ մի կարեւորութիւն չունեն», ուրեմն ինչի՞ համար պէտք եղաւ դրա ատիճանին մօտիկ որևէ մի այլ դպրոց։

Կատարելապէս ամայութիւն է տիրում հայկական ընտանիքում։ Ահա այն միակ և լուրջ առարկութիւնը, որի վրա կանգնած կարելի է մեղադրել խնամակալութեան կամակորութիւնը։ Խնամակալութիւնը փոքր չարիքը դարմանելու տեղ՝ գործեց աւելի խոշոր մի չարիք։ Դժբաղդաբար նա պատասխանատու մարդին չէ և չէ ենթարկվում ազգ. որևէ հիմնարկութեան, շնորհիւ իր նշանակովի լինելու հանգամանքին։

Սանասարեան դպրոցը Երզրումի մօտ ունի գրեթէ 40,000 ռուբլի արժեցող մի ագարակ, երկար տարիներից ի վեր թիւրքերը գրաւել են նրան ու մինչև այսօր արդիւնքը իւրացրել։ Մինիստր Նորատունկեան էֆէնդին մատը մատին չը խփեց իր խնամակալության յանձնված դպրոցի այդ արժէքաւոր կալուածը յետ խլելու համար։ Բայց երբ Սանասարեան վարժարանի գոյքերը որոշվեց փոխադրել Սեբաստիա ու Դաշնակցութիւնը ընդդիմացաւ, մինիստրը Նորատունկեանի խնամակալութիւնը թիւրք կառավարութեան զինված օժանդակութիւնը խնդրեց։ Իսկ դաշնակցականները, որ այնքան խոհեմ ու հարբերող են դառել այժմ քիւրդական ու թիւրքական բռնութիւնների հանդէպ ու զում են օրէնքի նեղ սահմաններում չափը կառավարութեան բողոքելու ձևն իսկ ուրու ձևել, երբէք չը քաշվեցին յայտարարել կառավարութեան, որ եթէ կառավարութիւնը յանդգնի միջամտել Սանասարեան դպրոցի խնդրին, իրանք զէնքով իսկ պիտի դիմադրեն։

Այսպէս են մեր ազգ. գործերը ղեկավարել ձգտող հոսանքները, լինեն նրանք պահպանողական թէ ազատական։

Ուսումնական այս տարվայ շեմքին, երզրումցի ժողովուրդը, իր բոլոր հոսանքներով, աղաներ, դաշնակցականներ, վաճառականներ, պահպանողական թէ առաջադիմական էլի ազիզում խնդրանքներով խլացնում են Կ. Պօլսոյ խնամակալութեան, պատրիարքարանի, ազգ. ժողովի ու Էջմիածնի ականջները. սոված ազգատի նման լալագին պաղատում են վերադարձնել «իրանց իրաւունք» Սանասարեան վարժարանը։ Մարդ զայրոյթ է զգում, տեսնելով որ երբ երզրումցին ի վիճակի է իր միջոցներով միջնակարգ վարժարան պահելու, բայց էլի ուրիշ ազգատների նման վաղ չէ տալիս մուրացկանի տպրակը կրելուց։

Երզրումցին կարող է ունենալ ու հոգալ սեփական միջնակարգ վարժարան, եթէ զոհողութիւն անելու կամք ունենայ։ Բայց ով է մտածում այդ մասին, երբ ձրի ստանալու յոյսեր կան։ Մուրացկանութիւնը ամենաշահաւէտ արհեստն է, եթէ մի մարդ կամ մի ժողովուրդ նամուս ասված բանը մոռանայ։ Կրթական գործում՝ հայերի և մասնաւորապէս թիւրքահայերի մէջ մուրացկանութիւնը իւրատեսակ առաքինութիւն, ուսումնատենչ լինելու յատկութիւն է համարվում։

Առաջադիմական հոսանքներն իսկ չեն ձգտում դիմել ժողովրդական ինքնօգնութեան միջոցին, այդ անսպառ ու զեղեցիկ դանձին։ Բարերար Սանասարեանի անուան ու յիշատակին նուիրված ամեն գովասանք ու խնկարկութիւն երզրումցիների կողմից՝ ներկայումս ուրիշ բան չէ, եթէ ոչ շողոքորթութիւն։

Մուրացկիներին է միայն վայել այդպիսի «անուշ լեզու թափելը», իրանց երեսին շպրտված մի կտոր չոր հացի համար։

Կէնայք

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒՊԵԱՆ

Գանձակ, 21 սեպտեմբերի

Ցանկութեանս հակառակ անկարող լինելով ներկայ լինելու Էջմիածնի սրբազարում տեղի ունենալիք Համազգային Մեծ Օծկլեանին, սեպուհ պարտականութիւնս համարեցի նախքան տօնախմբութիւնները, ուղարկել գէթ սովորական խոստացածս տարեկան անշան լուման։ Ուստի ի լրումն 1910 թ. № 161 «Մշակում» տպված իմ նամակի, ուղարկում եմ ասատասիկ առաջիկայ 1914 թ. համար ևս 5 ր. (1911, 1912 և 1913 թ.-երի համար ուղարկած ունեմ խմբագրութեան ակտ կատարեցին, շրջանաւարտներին վկայականներ տուին և այլն։ Ամեն բանով աշխատեցին նմանվել, բայց ի զուր։

Մինչև այժմ Կ. Պօլսի խնամակալութեան դէմ հուր ու բոց ժայթքող Դաշնակցութիւնը այս տարի դառել է հեզ գառնուկ, աղաչանքներով, պաղատանքներով խնդրում է խնամակալութեան, որ գթայ «իրաւազրկված» երզրումցիներին և դպրոցը վերբանայ։

Խնամակալութիւնն էլ նազ է անում։

* * *

Անաչառ դիտողութեամբ մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ երզրումցիների (աղաների, վաճառականների խմբակները, դաշնակցականները) ամբողջ վայնասունը ոչ թէ նրա համար է, որ խախտվել է կառկի արամադրութիւնը, այլ պարզապէս՝ որովհետև իրանց ձեռքից դուրս է պրծել ձրի ու համեղ պատառը։ Եթէ նրանք բարերարին սիրում էին, ինչու՞ 30 տարվայ ընթացքում զէթ մի օր չը մտածեցին այսօրվայ օվցիաների, հոգեհանդիսաների, երախտագիտական զգացումների կէսը անել ու արտայայտել։ Մինչ այսօր նոր մխիթարեն ընկաւ աղա Մկրտչի բարիքը։ Եթէ սիրում էին այդ մարդու յիշատակը, թող վարժարանը կուսակցական կռւի բոյն ու միջոց չանէին։

Անկախ այս բոլորից, դպրոցը Սեբաստիա փոխադրելու խնամակալութեան որոշումը սխալ ու ձախող մի քայլ է։ Սեբաստիան հայկական նահանգների կենտրոն չէ։ Հայաստանցի պատանին չը պիտի կարողանայ օգտվել նրանից այնպէս, ինչպէս կարող պիտի լինէր՝ եթէ դպրոցը հաստատվէր Մեծ-Հայքի որևէ կենտրոնում։ Եթէ չը հաշուենք Վանի Երամեան մասնաւոր վարժարանը, կարելի է բացարձակապէս ասել, որ հայկական կոչված նահանգներում այժմ չը կայ ոչ մի միջնակարգ վարժարան. չը կայ նոյն իսկ դրա ատիճանին մօտիկ որևէ մի այլ դպրոց։

Կատարելապէս ամայութիւն է տիրում հայկական ընտանիքում։ Ահա այն միակ և լուրջ առարկութիւնը, որի վրա կանգնած կարելի է մեղադրել խնամակալութեան կամակորութիւնը։ Խնամակալութիւնը փոքր չարիքը դարմանելու տեղ՝ գործեց աւելի խոշոր մի չարիք։ Դժբաղդաբար նա պատասխանատու մարդին չէ և չէ ենթարկվում ազգ. որևէ հիմնարկութեան, շնորհիւ իր նշանակովի լինելու հանգամանքին։

Սանասարեան դպրոցը Երզրումի մօտ ունի գրեթէ 40,000 ռուբլի արժեցող մի ագարակ, երկար տարիներից ի վեր թիւրքերը գրաւել են նրան ու մինչև այսօր արդիւնքը իւրացրել։ Մինիստր Նորատունկեան էֆէնդին մատը մատին չը խփեց իր խնամակալության յանձնված դպրոցի այդ արժէքաւոր կալուածը յետ խլելու համար։ Բայց երբ Սանասարեան վարժարանի գոյքերը որոշվեց փոխադրել Սեբաստիա ու Դաշնակցութիւնը ընդդիմացաւ, մինիստրը Նորատունկեանի խնամակալութիւնը թիւրք կառավարութեան զինված օժանդակութիւնը խնդրեց։ Իսկ դաշնակցականները, որ այնքան խոհեմ ու հարբերող են դառել այժմ քիւրդական ու թիւրքական բռնութիւնների հանդէպ ու զում են օրէնքի նեղ սահմաններում չափը կառավարութեան բողոքելու ձևն իսկ ուրու ձևել, երբէք չը քաշվեցին յայտարարել կառավարութեան, որ եթէ կառավարութիւնը յանդգնի միջամտել Սանասարեան դպրոցի խնդրին, իրանք զէնքով իսկ պիտի դիմադրեն։

Այսպէս են մեր ազգ. գործերը ղեկավարել ձգտող հոսանքները, լինեն նրանք պահպանողական թէ ազատական։

Ուսումնական այս տարվայ շեմքին, երզրումցի ժողովուրդը, իր բոլոր հոսանքներով, աղաներ, դաշնակցականներ, վաճառականներ, պահպանողական թէ առաջադիմական էլի ազիզում խնդրանքներով խլացնում են Կ. Պօլսոյ խնամակալութեան, պատրիարքարանի, ազգ. ժողովի ու Էջմիածնի ականջները. սոված ազգատի նման լալագին պաղատում են վերադարձնել «իրանց իրաւունք» Սանասարեան վարժարանը։ Մարդ զայրոյթ է զգում, տեսնելով որ երբ երզրումցին ի վիճակի է իր միջոցներով միջնակարգ վարժարան պահելու, բայց էլի ուրիշ ազգատների նման վաղ չէ տալիս մուրացկանի տպրակը կրելուց։

Երզրումցին կարող է ունենալ ու հոգալ սեփական միջնակարգ վարժարան, եթէ զոհողութիւն անելու կամք ունենայ։ Բայց ով է մտածում այդ մասին, երբ ձրի ստանալու յոյսեր կան։ Մուրացկանութիւնը ամենաշահաւէտ արհեստն է, եթէ մի մարդ կամ մի ժողովուրդ նամուս ասված բանը մոռանայ։ Կրթական գործում՝ հայերի և մասնաւորապէս թիւրքահայերի մէջ մուրացկանութիւնը իւրատեսակ առաքինութիւն, ուսումնատենչ լինելու յատկութիւն է համարվում։

Առաջադիմական հոսանքներն իսկ չեն ձգտում դիմել ժողովրդական ինքնօգնութեան միջոցին, այդ անսպառ ու զեղեցիկ դանձին։ Բարերար Սանասարեանի անուան ու յիշատակին նուիրված ամեն գովասանք ու խնկարկութիւն երզրումցիների կողմից՝ ներկայումս ուրիշ բան չէ, եթէ ոչ շողոքորթութիւն։

Մուրացկիներին է միայն վայել այդպիսի «անուշ լեզու թափելը», իրանց երեսին շպրտված մի կտոր չոր հացի համար։

Կէնայք

բագրութեանդ առանձին նամակներով դարձեալ 5-ական ռուբլիներ, որպիսի գումարների ստացումը տպված է «Մշակի» 1912 թ. № 235-ում) խնդրելով բարեհաճել յայտնացնել այդ փողը ուսուցիչների ապահովութեան և դպրոցական ֆոնդին։

Գարեգին քահ. Թումանեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Մեծ պետութիւնների կողմից միջազգային մանդատով է մեկնելու Ալբանիա՝ այդ երկրի ներքին կազմակերպութեան համար։

◆ Աւստրիան, հակառակ Իտալիայի մերժման, համաձայնեց 12,000 հրացան ուղարկել ալբանիներին։

◆ Ալբանները պատրաստութիւններ են տեսնում ներս խուժելու Նովբազարի սանջակը։

◆ Դիակովոյի մօտերը տեղի ունեցած կռուում, լուրերի համաձայն, սպանվել է Ռիզա-բէյը։

◆ Ռուսաստանը և Ֆրանսիան առաջարկեցին Բոլգարիային չը խառնվել սերբ-ալբանական վէճին։

◆ Պետերբուրգի թիւրքաց դեսպանատունը «Н. Вр.»-ին ուղղած պաշտօնական գրութեամբ հերքում է հեռագրական այն տեղեկութիւնը, թէ իբր, համաձայն Կ. Պոլսի դեսպանատների ստացած տեղեկութիւնների, Գիւմիւլջինայում թիւրք զօրքերը սրի են քաշել 10,000 յոյնի։

◆ Ֆրանսիայի նախաձեռնութեամբ մեծ պետութիւնները յանձն առան միջնորդ լինել յոյն-թիւրքական միջադէպը հարթելու։

◆ Պետերբուրգի թիւրքաց դեսպան Թուրխան-փաշային յայտնեցին արտաքին գործերի մինիստրութեան մէջ, որ խաղաղութիւնը խախտելու համար պատասխանատուութիւնը կընկնէ Թիւրքիայի վրա։

◆ Հռոմից հաղորդում են, որ մեծ պետութիւնները վճռել են ձեռնպահ մնալ Թիւրքիայի վրա ազդելուց։

◆ Պետերբուրգի օսմանեան դեսպանատունը հերքում է սուլթանի ծանր տկարութեան մասին տարածված լուրերը։ Փաղիշահը հիւանդ է թեթև մրսելուց։

◆ Ռուսաստանը եռանդուն բողոք յայտնեց Թիւրքիային այն առիթով, որ նա նաւթի մենավաճառութիւնը տուել է ամերիկեան «Ստանդարտ» ընկերութեանը։

◆ Բոլգարական զինուորական մինիստրը հաղորդեց «Daily Mail»-ի թղթակցին հետևեալ տեղեկութիւնները բոլգարական կորուստների մասին։ Բալկանեան երկու պատերազմում ընդհանրապէս եղան 44, 892 մարդ, որոնցից 579-ը օֆիցէր են։ Վիրաւորված են ընդամենը 104,586 մարդ, որոնցից 1731-ը օֆիցէր են։ Երկու պատերազմում անհետ կորան 7824 մարդ։ Վիրաւորվածների ընդհանուր թիւից 10 տոկոսը ընդ միշտ մնալու է ինվալիդ։ Երկրի ազգաբնակութեան տղամարդկանցից իւրաքանչիւր 47 հոգուն ընկնում է մի սպանված։

◆ Լօնդոնից տեղեկացնում են, որ Եապօնիան մեծաքանակ զօրքեր է կենտրոնացնում ոչ միայն Չինաստանում, այլև անգլիական ազդեցութեան շրջանում։

◆ Պաշտօնական թուերի համաձայն, Նանկինի դէպքերը արժենում են 20 միլիոն դոլլար վնաս։

◆ Պարիզից հեռագրում են՝ որ մօտիկ ապագայում այնտեղ սպասվում է կարևոր խորհրդակցութիւն, որին մասնակցելու են ռուսաց մինիստրների խորհրդի նախագահ Կոկովցէվը, արտաքին գործերի մինիստր Սազոնովը, դեսպան Իզվոլսկին, Պետերբուրգի ֆրանսիական դեսպան Դէլկասէն և արտաքին գործերի մինիստր Պիշոնը։

◆ Բուդապէշտում ձիարշաւներին 75,000 կրոն մրցանակը շահեց ռուս իշխան Լիւբոմիրսկիի «Մոսցի-Կսիոն-ժէ» նժոյգը։

◆ Մի վէրսիայով, ճան. հաղորդակցութեան մինիստր Բուխլովը գտել է, թէ իբր, երկաթուղային խորհուրդը Սօսիկա կայսրանի մօտ չարագործների գործ է, միւս վէրսիայով՝ Բուխլովը ամենակտրուկ կերպով յայտնել է, որ պատճառը միմիայն հին, փչացած գծի մէջ է կայանում։ Սպասվում է կառավարական պաշտօնական քննութիւն։

◆ Ամենափաստացի կերպով, ինչպէս հաղորդում են բոլոր թերթերը, ապացուցվում է, որ Սօսիկա կայսրանի մօտ տեղի ունեցած աղէտի պատճառը բէլսների փչացած լինելն է եղել։ Մի քանի ինժենէրներ իրանց հետ վերցրել են այդ փչացած երկաթները։ Ամբողջ յանցանքը ընկնում է հարիւրաւոր անմեղ զոհերի արեան համար Վլադիկավկազի երկաթուղիների վարչութեան վրա։

◆ Սօսիկա կայսրանի մօտ տեղի ունեցած աղէտը պատճառեց աւելի քան մի միլիոն ռուբլու վնաս։ Պոստային վագոնի դրամները մնում են։

◆ Սօսիկա կայսրանի մօտ տեղի ունեցած երկաթուղային սոսկալի խորտակման ժամանակ, նորագոյն տեղեկութիւնների համաձայն, վիրաւորվել են աւելի կամ պակաս ծանր ու թեթև տեսակի մօտ 200 հոգի։ Սպանվածների թիւը անցնում է 50-ից։

◆ Կուբանի շրջանի պատգամաւոր Նիկոլայեվը, ինչպէս հաղորդում է «Куб. Край» թերթը, զեկուցագիր է պատրաստում Սօսիկա կայսրանի մօտ պատահած երկաթուղային աղէտի մասին և կարդալու է Պետ. Դումայի ընդհանուր ժողովում։

◆ «Пр. Край» թերթը տպում է հետզհետէ սոսկալի երկաթուղային աղէտի լուսանկարները։

◆ Միևնոյն թերթը հաղորդում է, որ բոլոր նշաններից երևում է, թէ Նախիջևանի քաղաքային դումայի ձայնաւորների ընտրութիւնների ժամանակ յաղթութիւնը մնալու է առաջադէմ հայ խմբակի կողմը։

◆ Նիկոն արքեպիսկոպոսը ռուսաց սինոդին նախագիծ է ներկայացրել՝ արգելելու յոդուածներ տպել լրագիրներում կրօնական ու եկեղեցական հարցերի մասին։

◆ Կապտնում ինքնասպանութիւն գործեցին փոխադարձ համաձայնութեամբ երեք գիմնազիստ։

◆ Վօրոնէժում փոխադարձ համաձայնութեամբ թոյն խմեցին երեք օրիորդ, որոնցից մինին փրկեցին։

◆ Ռուսաց ժող. լուս. մինիստր Կասսօն մի հրահանգ է պատրաստում, թէ այն միջնակարգ դպրոցներում, ուր աշակերտութեան 75% ուղղափառներ են, ծնողական ժողովների անդամները լինելու են միմիայն ուղղափառներ։

◆ Պետ. Հեռ. Գործակալութիւնը ի յուր ամբողջ Ռուսաստանի ուղարկել է բոլոր օրաթերթերի խմբագրութիւններին Բէյլիսի գործը, որ, ինչպէս յայտնի է, մեղադրվում է Կիէվում պատահի Իւշչինսկիին հրէական կրօնական ծէսերի պահանջով տանջելու և սպանելու մէջ։ Մեղադրական ակտը բռնում է 40 ամբողջ երես։ Գործը քննվելու է Կիէվի նահանգական դատարանում երդուեալ ատենակալների մասնակցութեամբ և տևելու է մօտ 20 օր։ Այդ ամբողջ ժամանակամիջոցում երդուեալ ատենակալները իրաւունք չունեն դուրս գալու դատարանի շէնքից, որի համար նիստի դահլիճում պատրաստված են նրանց անկողինները։ Առանձին տեղ յատկացված է մամուլի ներկայացուցիչների համար, որոնց թիւը շատ մեծ է և որոնց մէջ կան մի քանի արտասահմանեան թղթակիցներ։ Մատդրութիւն կայ հասարակութեանը չը թողնել դատավարութեանը։

◆ Սօց.-դեմ. ֆրակցիան Պետական Դումայի հէնց առաջին նիստում ներկայացնելու է երկու հարցապնդում, մինը մամուլի դրութեան ու մասնաւորապէս բանաւորական օրաթերթերը փակելու մասին, միւսը Կովկասում խաղաղ գործադուլներին ոստիկանական միջամտութեան մասին։

◆ Սէմիրէչէնի երկաթուղու կառուցման համար ասորագրված է 65 միլիոն ռուբլու փոխառութիւն։

◆ Կապրի կղզում գտնվող գրող Մակսիմ Գօրկին վտանգաւոր կերպով հիւանդ է։ Նրան տարել են Նեապոլ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

21 սեպտեմբերի

ԶԻՏԱ։ Վէրինէուլինսկում խուզարկութիւն կատարվեց երկու հոգու մօտ, որոնք կասկածվում էին գնացքի մէջ դրամատարից 100,000 ր. յափշտակելու։ Ապա կըրկին խուզարկութիւն եղաւ Վինօգրադովի տանը, ուր և երևան հանվեց մի աւազակախումբ, որ կրակ բացեց ոստիկանութեան վրա։ Սպանվեցին երեք քաղաքապահ ոստիկան, ծանր վիրաւորվեցին երկուսը, վիրաւորվեց մի թաղական վերահսկիչ։ Յանցագործներից սպանվեց մէկը, ձերբակալվեց մէկը, իսկ մնացածները փախան։ Խուզարկութիւնները շարունակվում են։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ։ Ալմաղնայա-Իրմինօ շրջանում երեք զինված մարդ գնացքի մէջ դրամատարից յափշտակեցին 700 ր.։ Հրացանաձգութեան ժամանակ սպանվեց մի ժանդարմ և կայարանապետի օգնականը։

ՐԵՎԷԼ։ Եկաւ ծովակալ Հէսսէնի նաւատորմը։

ՏՕԿԻՕ։ Իսկօհամայում երևան հանվեց երրորդ մահացութեան դէպքը ժանտախտից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Զինուորական մինիստրութեան բիւջէն 1914 թ. աւելացած է, համեմատած այս տարվայ հետ, աւելի քան 80 միլիոն ռուբլով։

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան նախահաշիվի հաշվեկշիռը կազմում է 109,301,593 ր., որից նոր արքունի երկաթուղիների հետազօտական աշխատանքների համար՝ 432,250 ռուբլի։

ՕԴԵՍՍԱ։ Խօլերայից մեռաւ մէկը։

ՄՕՍԿՎԱ։ Էլեքտրաքարշի ծառայողները յայտարարվեցին պաշտօնեներից արձակված, որից յետոյ արձակվածների մի մասը համաձայնեց աշխատանքի ձեռնարկել։ Ժամը 4-ին աշխատանքները վերսկսեցին էլեքտրական կայարանի բոլոր բանուորները։ Ժամը 9 ից էլեքտրաքարշը գործում է մասամբ։

22 սեպտեմբերի

ԱՎԵԼԻՒՆՕ։ Քաղաքում և գաւառում երեկ. ժամը 7 ու 30 րոպէին զգացվեց երկրաշարժ, որի մասին հաղորդում են նաև Նեապոլից և Ֆօջիից։

ՇՄՈՆ։ Զինուորական օդաչաց Լավէրը Լաշերը ընկաւ և մեռաւ։

ՐԻՑՄՈՒ։ Զինուորական օդաչուներից մէկը ընկաւ մի զինուորի հետ և մեռաւ. զինուորը ծանր վիրաւորված է։

ՏԻՏՈՒԱՆ։ Օմրի հովտում սպանական հետախուզիչ զօրախումբը ենթարկվեց ապստամբների յարձակման. վիրաւորվեցին երեք օֆիցէր և չորս զինուոր, սպանվեց մի զինուոր։

ՆՈՎԳՕՐՕԴ։ Զօրքերի, քաղաքային կըրթական հաստատութիւնների սաների և գիւղացիների ներկայութեամբ կայացաւ գիւղացիների հաշվով կառուցված Ալէքսանդր II կայսրի արձանի հանդիսաւոր բացումը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ներքին գործերի մինիստրը Դումային ներկայացրեց պետութեան մէջ ոստիկանութիւնը վերակազմելու նախագիծը։

Փոխ-ծովակալ Բաղլովը նշանակվեց ծովային գլխաւոր շտաբի կառավարիչ։

Արդարադատութեան մինիստրը մեկնեց Եալտա։

ՄՕՍԿՎԱ։ Մանթաշեանի նժոյգը ձիարշաւներին շահեց 4500 ր. և 3000 ր. մրցանակները։

ԲԻՒԿ։ Օդաչաց Պէգուն մի րոպէ թռաւ գլխիվայր, յետոյ շրջելով գործիքը, իջնելիս վեց անգամ օդում մահվան հանդոյց կատարեց (գլխիվայր իջնել աէրոպլանով)։

ՉԸ ՀԱՍՑՎԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

—

21, 22 սեպտեմբերի

Երևանից—Գօրոյանցին, Տիժնի-Նովգօ օղից—Սաֆարովին, Պետերբուրգից—Քաթանեանցին, Ասխարադից—Սարգիսովին, Զուլֆայից—Օհանջանովին, Մոսկվայից—Թադէոսեանին, Բէլիյ-Կլիուչից—Թայիրովին։

Խմբագիր-հրատարակիչ՝
Ա.Լ. ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Օզոնը ներկայանում է առաջին և միակ մէջոցը ատամները և բերանի խոռոչը մաքուր պահելու և ատամների փչացմանը միանգամայն յուսալի կերպով հակադրելու համար։ Անպայման այդօրինակ ներգործութիւնը հիմնաւորված է գլխաւորաբար Օզոնի յատկութեան վրա՝ թափանցել փչացած ատամների ու ընդերի լորձաթաղանթների ներսը և կարծես թէ մնունդ մատակարարել նրանց։

Հարկաւոր է առանձին ուշադրութիւն դարձնել Օզոնի բոլորովին ինքնայատուկ ներգործութեան վրա այն ժամանակ, երբ ատամները և բերանի խոռոչը մաքուր պահելու համար գործադրվող բոլոր այլ միջոցները իրանց ներգործութիւնն են անում միմիայն մաքրելու պրոցէսի ընթացքում, Օզոնը շարունակում է իր անտիսեպտիկ ներգործութիւնը էլ աւելի շարունակաբար՝ երկար ժամերի ընթացքում, ատամները մաքրելուց յետոյ։ Օզոնը ներս է ծծվում փչացած ատամների և ընդերի լորձաթաղանթների մէջ, որոշ ատիճան նրանց մնուցանում է, և բերանի խոռոչում մնացած այդ անտիսեպտիկ պաշարը պայմանաւորում է յետագայ ներգործութիւնը մի շարք ժամերի ընթացքում։ Օզոնի այդ նշանակալից յատկութիւնը յուսալի պահպանում է բերանը փտածութեան պրոցէսների զարգացումից և պահում ատամները առողջ դրութեան մէջ։

Մի սրուակի գինը **85** կոպ., մեծ սրուակը, որ կարող է բաւականանալ մի քանի ամիս, արժէ **1** ր. **50** կ.։

(Մ. 179586/179604)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Դաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Ալօրնցօվի արձանի հանդէպ)

Ամեն or, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

«606»-ի եւ «914»-ի ներսրսկում բժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱՒՍՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱԶԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւանդութ.։
Կ. Մ. ԶԻՒՕՎԱՆԻ—9½—10 ք. ժ. աչքի, ներքին և նեարդային հիւ.։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Ն. Տ. ՄՈՒՐԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութ.։
Մ. Գ. ՍԻՒՆԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հիւ.։
Ա. Պ. ՊԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկաստա.։
Կ. Դ. ԳՈՒՐԳԵՆԻՋԷ—1—2 ժ. ներքին, երեխայոց հ. և ծաղկաստա։ Ուրեան, մէզի, խուլի հետազօտութիւն։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԻՐՈՒՀԻՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Գ. ՍԻՒՆԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Կ. Դ. ԳՈՒՐԳԵՆԻՋԷ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Զքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

1. 0—91

Մամուլի տակից

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ԾԱՆՐ ԵՐԱՁ

պիէսը չորս գործողութեամբ

ԼԵՒՈՆ ՔԱԼԱՆԹԱՐԻ

Վաճառվում է «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրավաճառանոցում։

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

(օ. մ.) 815. 10—1

„Մշակի" խմբագրատանը վաճառվում են

հետեւեալ վիպական երկերը.

1) ԶԱՒԻԴ ՔՈՒՇԱՆ՝ վէպ Պարկամանի կեանքից, Շահրիարի . 1 ր. —
2) ԻՆՆՈՍԻՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգոյի, թարգմ. Ա. Սաֆարեանի . . . . . 1 ր. 50 կ.
3) ՈՒՐԱՆԻԱ, ատաղձիտ. վէպ. Կ. Ֆլամարիոնի, թարգմ. Հ. Առաքելեանի . . . . . 1 ր. 50 կ.
4) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բօրդոյի, թարգ. Հ. Առաքելեանի— 60 կ.
5) ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի . . . . . — 50 կ.
6) ՀԱՅՐԵՆԱԶՈՒՐԿ, Ե. Սպիրիի, թարգ. Իս. Բարութիւնեանի . — 50 կ.
7) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մօպասանի, թարգ. Հ. Առաքելեանի 1 ր. —
8) ՍԱՒԱՌՆՈՂ ՈԳԻՆ, վէպ. Ց. Սօլովեանի . . . . . —40 կ

Նոյնք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեղանից փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ կը լինի 25%։

(5) 10—9

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Նիկ. Աբրահամեանի

հետեւեալ հրատարակութիւնները.

I

ԶԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇԻՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ

երկաթ., կլօնիալ, բակալ. և բամբակէ ապրանքների (առաջին անգամն է, որ լոյս է տեսնում հայերէն լեզուով), գինն է 2 ռուբ.։

II

Руководство торг. бухгалтеріи

въ связи съ коросинозав. производствомъ (2 допол. и исправл. изд.) Ц. 2 р. 50 к.

III

Таблица вычисл. процентовъ

отъ 1 до 360 дн. отъ 1/4 до 12% и на всѣ капиталы отъ 1 до 10,000 р. (2 изд.) Ц. 85 к.

IV

Журнальныя статьи

для опредѣл. дебета и кредита. Ц. 75 к.

V

Общедоступная справочн. книжка

для слушателей и слушательницъ бухгалтерск. курсовъ и занимающихся конторскими дѣлами. Ц. 30 к.

Հեղինակի մօտ՝ Бухг. курсы Н. В. Абраамяна, Николаевская, 22 և գրավաճառանոցներում։

(Ե.Հ.Կ.) 680. 20—13

ՄԵՂՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱԶԽԱՏԱՆՔԻ ՏՈՒՆԸ

ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է ՀԱՒԱՔԱՐ (Խախտինսկի հրապարակ, Լազարեվսկի փողոց № 1, Հաւաքարի կլուբի շէնքում)։

№ 4 արտվայը կանգնում է մի քանի քայլ հեռաւորութեան վրա։ Բոլոր արհեստանոցներում, ինչպէս նախկին տարիները, ընդունվում են ամեն տեսակ պատուէրներ՝ կանանց և երեխաների զգեստներ, (փոքր 2 տեղամից ոչ ավել և արտվայի ծախսը գնդվում է կարելավարձից), սպիտակեղէններ, հարթակարի պատուէրներ, ֆօրմէնից չորեր, աշակերտական և բանուորական զգեստներ, վերմակներ, ներքնակներ, վերմակի սաւաններ հարթակարով և այլն և այլն։

Դուլպայագործական արհեստանոցում աշակերտուհիների և պատուէրների ընդունելութիւնը հոկտեմբերի 15-ից։

Կարասնոցի արհեստանոցում ընդունվում են պատրաստելու ամեն տեսակ տուփեր՝ ծխախոտի, կօնֆիտերսկի, ապտեկարսկի, շերամի, զգեստների, կօշիկների և այլն։

ԳՆԵՐԸ ՇԱՏ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ։

(Ե. Հ.) 800. 15—2

Լոյս տեսաւ

Հրատար. «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳԻ»

ՇԻՐՎԱՆԶԱԴԵ Զար ոգի դրամա 4 արարուածով . . . գ. 75 կ.
» Նամուս դրամա 4 արարուածով . . . գ. 75 կ
» Կործանուածը դր. 4 արարուածով գ. 75 կ.

Նոյն տեղում վաճառվում են.

» Աւերակների վրա դր. 3 գործող. գ. 60 կ
» Պատուի համար դր. 4 գործող. գ. 60 կ.
» Շարլատանը, կօմ. 1 գործողութ. գ. 30 կ.
» Նեզինէ դր. 3 գ. գ. 50 կ.

Դիմել՝ Тифлисъ, книж. маг. «Гуттенбергъ».

811 2—2

ԱԳԷՆՏ

ՅՈՎՀ. ԳՐԻԳՈՐԵԱՆ ԽԱԼԱԹԵԱՆԸ

Հիւանդութիւնից կապուրվելուց յետոյ վերանորոգել է յայտարարութիւններ ընդունելու պատուէրները տեղական և օտար քաղաքների պարբերական հրատարակութիւններում տպագրել տալու համար։ Բարեխիղճ և ճշգրիտ կատարումն ստանձնված պարտաւորութիւնների։

Միխայլովսկի պր. № 119. Տելէֆոն 697. (Ե.ու.) 810. 5—1

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

ԹԻՖԼԻՍ, Միխայէլեան պր. 24/4. Տելէֆօն № 976.

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։

Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։

Գործնական դասընթացները կատարվում են կուրսերում՝ Լօնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են բէալ կեանքից։ Առաջադիմելու համար անհրաժեշտ են հետևեալները. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., կրկն., ֆրանս., ամերիկան, բանկային և գործարանական). 2) Առևտրական թուաբանութիւն. 3) Քաղաքագիտութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թուաբանութիւն համրիչի վրա. 7) Վարչագրութիւն՝ արագագրութիւն (ամենավաղ ձեռքի ուղղագրութ.). բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլոգրաֆիա (ընտրիչագրութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և դասա-դասա։ Ունկնդիրների թիւը թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են ամենայն շաբաթ։ Ուսման պատճառով բացվում է երիտասարդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաբարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Ծնողների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոնները կուրսերի գրասենեակում—ամեն օր ժամը 10—12-ը և 4—7-ը։ Միխայլովսկի պր. № 24—4.

(օ.մ.) 743. 0—8

ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Գ. ԵՒ Մ. ՏԷՐ-ԱՒԹԵԱՆՆԵՐԻ

Նիկոլայեվսկայա, 36, Զօրօնցօվի արձանի մօտ։ Ընդունելութիւնը երեկոյեան ժամը 4—7-ը։

613. 50—35

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ Առեւտրական Գիտութիւնների Կուրսերում

ՆՈՐ ՄԵԹՕԴՈՎ ՍՈՎՈՐԵՑՎՈՒՄ ԵՆ

ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ

ազատ կարդալ, գրել և խօսել կարճ ժամանակվայ ընթացքում տեսական և գործնական պարապմունքների միջոցով, հանրամատչելի վճարով։ Կազմակերպվում են հասակաւորներից երեկոյեան խմբեր։ Զատապրական Դասընթացքներ արտասահման գնալ ցանկացողների համար։ Մանրամասն տեղեկութիւնները և ընդունելութիւնները կուրսերի գրասենեակում—ամեն օր ժամը 10—12-ը և 4—7-ը։ Միխայլովսկի պր. № 24—4.

(օ.մ.) 743. 0—8

ՀԱՅԵՐԷՆ ԳՐԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ

Գ. Ի. Ս. ՏԷՐ-ԱՒԹԵԱՆՆԵՐԻ

Գրական գրքերի մեծ մասնաւորութիւն։ Գրքերի ընտրութիւնը ամենայն հանդիսաւորութեամբ։ Գրքերի գինը ամենաէժան։ Գրքերի ընտրութիւնը ամենայն հանդիսաւորութեամբ։ Գրքերի գինը ամենաէժան։

Գրական գրքերի մեծ մասնաւորութիւն։ Գրքերի ընտրութիւնը ամենայն հանդիսաւորութեամբ։ Գրքերի գինը ամենաէժան։

Գրական գրքերի մեծ մասնաւորութիւն։ Գրքերի ընտրութիւնը ամենայն հանդիսաւորութեամբ։ Գրքերի գինը ամենաէժան։

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный